

ՀԻՆ ԹԻՖԼԻՍԸ՝ ԻԲՐԵԻ ՄՇԱԿՈՅԹՆԵՐԻ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ, ՄԱՀՔԻ ՄԻՋԱՎԱՅՐ

ՏԻԳՐԱՆ ՄԻՄԵԱՆ
tsimyan@googlemail.com

ՄՈՒՏՔ

Ժամանակակից Թիֆլիսի մոզականությունը պայմանավորում է կարծում ենք, նրանում տարբեր մշակոյթների առկայութեամբ:

Ընդհանրապէս քաղաքի բազմադիմութեան եւ բազմաշերտութեան ձեւաւորման վրայ մեծ ազդեցութիւն է թողնում մշակութային «բազմաձայնութիւնը», երբ տարբեր մշակութային արժէքներ, սովորոյթներ գտնուում են ներդաշնակ համակեցութեան միջավայրում: Թիֆլիսը, ըստ Երուանդ Մարգարեանի՝ «բոլոր արեւելեան հելլենիստական քաղաքների պէս դառնում է ցեղերի, էթնոսների, մշակոյթների մի իրորինակ ձուլման կաթսայ»¹: Եթէ Մցխեթիան համարում էր քարթլիական քաղաք, ապա Թիֆլիսը «իր ամբողջ պատմութեան ընթացքում ներքին բովանդակութեամբ վերագրային, ոչ-ներամիտի քաղաք էր...: Նրա դերը մեծանում էր այն պատմական ժամանակահատուածներում, երբ Վրաստանը համաշխարհային քաղաքակրթական գործընթացների մաս էր կազմում եւ հակառակը, ընկնում էր, երբ Քարթլին ներփակուում էր «ինքն իր մէջ»՝ դառնալով ասիական դատարկ եւ ինքնաբաւ երկիր»²: Պատմականօրէն, մինչ արաբական աշաւանքները, Թիֆլիսը միշտ եղել է տարբեր մշակոյթների եւ կրօնների հատման միջավայր, որտեղ կողք կողքի էին գտնուում զրադաշտական, քրիստոնէական եւ տեղական մշակոյթի արժէքները³:

Մեր յօդուածի նպատակն է հայկական խօսոյթ (discourse) հիման վրայ ցոյց տալ բազմամշակութային միջավայրը հին Թիֆլիսում ԺԸ.-ԺԹ. դարերի ընթացքում: Այս նպատակի իրականացման համար ընտրել ենք հայ ուշ միջնադարի վերջին աշուղ-բանաստեղծ, բազմալեզու Սայեաթ-Նովային (1722-1795), Խաչատուր Աբովեանի (1809-1848) «Ակնարկ Թիֆլիսում Ապրող Հայերի Կեանքի Եւ Յատկապէս Նրանց Հարսանեկան Սովորութիւնների Մասին» (1840-41) խոհագրութիւնը եւ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի (1869-1923) եւ գրաքննադատ, հրապարակախօս Նիկոլ Աղբալեանի (1873-1947) յօդուածները:

Այս բնագրերը բացառիկ հնարաւորութիւն են տալիս վերակառուցելու հին Թիֆլիսը՝ իր առօրեայով, արեւելեան եւ արեւմտեան արժէքների արանքում⁴: Մեր հիմնական դրոյթն այն է, որ բազմալեզու, բազմամշակութային քաղաքները, տարածաշրջանները պարարտ հող են տրամադրում մշակոյթների երկխօսութեան, որի հետեւանք է դառնում մշա-

կութային «պայթիւնը»՝ արուեստի եւ գրականութեան՝ որակային, յարա-
ցուցային, արժէքաբանական փոփոխութեան եւ զարգացման առումով:

ԺԸ. ԴԱՐԻ ՀԻՆ ԹԻՖԼԻՍԸ. ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՅԹՆԵՐԻ
ԽԱՉՍԵՐՈՒԿՈՒՄ

Սայեաթ-Նովան կոփում է հին Թիֆլիսի բազմալեզու միջավայրում,
տարածաշրջանի մշակոյթների բախման խաչմերուկում:

Նրա «Դաւթարի» հիման վրայ կատարուած ուսումնասիրութիւնները
ցոյց են տուել, որ նա *«տաւել գրագէտ է եղել վրացերէնում, հայերէնից ու
վրացերէնից բացի քաջ տիրապետել է քանաւոր աղբրեջաներէնին»*⁵: Բա-
ցի այդ գրել-կարդալ է իմացել պարսկերէնով եւ արաբերէնով, գուցէ նա-
եւ խօսել: Այսպէս են կարծում գիտնականները պարզապէս այն պատճա-
ռով, որ նրա ստեղծագործութիւններում հանդիպում են պարսկերէն ու ար-
աբերէն բառեր⁶: Նալբանդեանի կասկածը Սայեաթ-Նովայի՝ պարսկերէ-
նի իմացութեան մասին արդէն փարատել է Ռ. Աբրահամեանը: Սայեաթ-
Նովայի խաղերի բառապաշարի քննութեան հիմամբ Աբրահամեանը եզ-
րակացնում է, որ պարսկերէն *«գործնականապէս գիտեր, իսկ տեսակա-
նապէս հիմնաւոր կերպով չգիտեր»*⁷: Իսկ արդէն Արամ Ղանալանեանը
խաղերի հիման վրայ նկարագրում է Սայեաթ-Նովայի եւ պարսկական
մշակոյթի առնչութիւնները⁸, որտեղ մասնաւորապէս նշում է, որ Թիֆ-
լիսն է հնարաւորութիւն տալիս *«շփուել բազմազգ բնակչութեան տարբեր
շերտերի հետ»*⁹: Ինչպէս տեսնում ենք, դարձեալ միջավայրն է հարս-
տացնում Սայեաթ-Նովայի խաղերը՝ փոխառութիւնների դրսեւորումով:

Սուրէն Գայսարեանը «Սայեաթ-Նովա» յօդուածում ուշադրութիւն է
դարձնում մի կարեւոր հանգամանքի վրայ, ըստ որի՝ Սայեաթ-Նովայի
բանաստեղծութիւններում տողի առաջին մասը հայերէն է, միւսը՝ թուր-
քերէն. անգամ բանաստեղծութիւն կայ գրուած միաժամանակ չորս լեզու-
ով՝ հայերէն, վրացերէն, թուրքերէն եւ պարսկերէն¹⁰: Այս փաստը վկայում
է նաեւ, որ Հերակլ Բ.ի պալատը բազմալեզու միջավայր էր, եւ երգի
հասցեատերերը ի վիճակի էին հասկանալու Սայեաթ-Նովայի ասելիքը:

Նկատենք, որ քանակապէս անհաւասար են խաղերը. 120 խաղ գրուել
է թուրքերէն, 70՝ վրացերէն եւ միայն 30 տարեկան հասակում Սայեաթ-
Նովան սկսում է գրել մայրենի լեզուով: Մեզ է հասել ընդամենը 30 հա-
յերէն խաղ: Խաղերի քանակային տարբերութիւնը հիմք չի տալիս դատո-
ղութիւններ անելու, լեզուները առաջնայինի եւ երկրորդականի բաժանե-
լու, քանի որ Սայեաթ-Նովայի «Դաւթար»ից, ըստ Սայեաթնովագէտ Մօ-
րուս Հասրաթեանի, սկզբից եւ վերջից էջեր են պակասում: Իսկ դա նշա-
նակում է, որ թուրքերէն եւ հայերէն խաղերի մի մասը մեզ պարզապէս չի
հասել: Իսկ ինչ վերաբերում է վրացերէնին, ապա Հասրաթեանը իրաւա-
ցի է, որ վրացերէն խաղերի քանակը պիտի էլ ատելի շատ լինէր, քանի որ

դրա համար ունեցել է առանձին «Դաւթար», որը մեզ չի հասել¹¹: Չմոռանանք նաեւ, որ Սայեաթ-Նովայի կինը խաղերի մի մասն էլ այրել է: Այնպէս որ մեզ հասած խաղերի թուերը չեն կարող հիմք դառնալ որակային դատողութիւններ անելու համար:

Ինչ գործառոյթ էին կատարում թուրքերէնը, վրացերէնը եւ հայերէնը: Թուրքերէնը աշուղների մեջլիս դուրս գալու հիմնական լեզուն էր՝ նրանց *Լինգուա Տրանկան*, վրացերէնը Սայեաթ-Նովայի անմիջական հաղորդակցման միջավայրի լեզուն: Եթէ թուրքերէն, վրացերէն լեզուները գործառնում էին «աշխատանքային», անմիջական միջավայրում¹², ապա հայերէնը պիտի լինէր նուազ կիրառական: Իսկ հայերէն խաղերը աչքի են ընկնում իրենց էլ՝ աւելի անմիջականութեամբ, ինչը պայմանաւորուած է հարազատ լեզուի գործօնով: Այս փաստը նշում են ոչ միայն հայ¹³ եւ վրացի Սայեաթնովագէտերը, օր.՝ Իոսի Գրիշաշվիլին. «*Սայեաթ-Նովան [հայերէն խաղերում] երեւան է գալիս իր ողջ էութեամբ*»¹⁴:

Բայց ամենակարեւորն այն է, որ Սայեաթ-Նովայի խաղերը մինչ այսօր հնչում են երեք լեզուներով էլ: Վրաց բանաստեղծ Սիմոն Զիքունանին Սայեաթ-Նովային նուիրուած իր «Ես Զաւակը Չեմ Սայեաթ-Նովայի» բանաստեղծութեան մեջ գրում է.

*«Երեք լեզուով է Սայեաթը երգել
Երեք ձայնով է նա սիրտս յուզում
Երեք ձայներն այս սրտի մէջ պահել,
Տասնհինգ ձայնով երգել եմ ուզում»*¹⁵:

Որտեղի՞ց գիտեր Սայեաթ-Նովան այդքան լեզուներ: Որոշ Սայեաթնովագէտներ¹⁶ գտնում են, որ 16-19 տարեկան հասակում (1738-1741ին) Սայեաթ-Նովային «մարդագող» լեզգիները առեւանգել են եւ վաճառքի հանել Թուրքիայում, ինչն էլ հիմք է հանդիսացել Սայեաթ-Նովայի դեգերումներին՝ դէպի «Հաբաշ եւ Հնդկաստան» («*Տասինը տարիս լրացաւ ման եկայ Հաբաշ ու Հնդկաստան*»)¹⁷: Նոյն կարծիքին ենք նաեւ մենք: Այս վարկածը ուզում ենք փաստարկել Աբովեանի մի դիտարկմամբ. «*Թիֆլիսը, որ գրեթէ աւազակային որջ է հանդիսացել լեզգիների եւ այլ հարեւան, մինչեւ այսօր էլ անկույտուրայական ժողովուրդների համար, որոնք տնօրինում էին նրա բախտն ըստ իրենց քմահաճոյքի...*»¹⁸: Հենց այդ «քմահաճ» գործողութեան արդիւնքում էլ սկսում է Սայեաթ-Նովայի գերութեան ողիսականը: Փաստօրէն, անձնական դժբախտութիւնը վերածուում է փորձի, գիտելիքի կուտակման եւ լեզուներ սովորելու տարիների:

Սայեաթ-Նովայի մեծութեան պատճառներից է այն, որ նրա լեզուների իմացութիւնը եւ դրանց երաժշտական եղանակների համադրումը Հերակլ Բ.ի պալատում հնարաւորութիւն են տալիս Սայեաթ-Նովային դուրս գալ վարպետութեան այլ մակարդակ՝ աշուղից վերածուել տարբեր մշակոյթները համադրող պոէտի: Այս առումով ուշագրաւ է Հենրիկ Բախ-

չինեանի դատողութիւնը. «Սայեաթ-Նովան, առաջինը լինելով, պարսկա-
յանգ բանաստեղծութիւնը փոխել է վրացերէնի՝ ստեղծելով վրացալեզու
աշուղական պոեզիա: ...Սայեաթ-Նովան վրացական պոեզիան դուրս բե-
րեց արքունիքից եւ մօտեցրեց, հասկանալի ու մատչելի դարձրեց ժողովր-
դին»¹⁹: Նոյնը կարելի է ասել նաեւ հայերէնի մասին. նա ընտրում է հայ-
կական հաղորդակցման անմիջական նշանագիրը՝ Թիֆլիսի բարբառը:

Սայեաթ-Նովայի նորարարութեան մասին կարելորում ենք «Կալմա-
սոբա» վրացական աղբիւրում պահպանուած իր իսկ գրառումը՝ «Ես կա-
րողանում էի սազ նուազել: Յօրինեցի վրացական երգեր՝ պարսկական
մեղեդիների նուազակցութեամբ: Դա ինձանից առաջ ոչ ոք չի արել: Երբ
Հերակլ թագաւորը մեզ՝ աշուղներին, մեջլիս հրաւիրեց, եւ ես երգեցի
վրացերէն պարսկական մեղեդայնութեամբ, նա ինձ խալաթ նուիրեց:
Դրանից յետոյ շատերը ուզեցին ընդօրինակել»²⁰: Հատուածը յստակ ցոյց է
տալիս, որ նա տարբեր մշակոյթների իմացութեան շնորհիւ կարողանում
է խաղալ մշակոյթների խաչմերուկում: Համադրում է վրացերէնը պարս-
կական մեղեդայնութեան հետ, ինչը մեծ նորարարութիւն էր:

Հին Թիֆլիսում տարբեր ազգերի երաժշտական մեղեդիների համադր-
ման մասին ուշագրաւ կարծիք է յայտնում Մարգարեանը. «Միայն Թիֆ-
լիսն է կարողանում ծնել նման բազմապիսի երաժշտի, ինչպիսին Սայ-
եաթ-Նովան է: ...Նրա արուեստում ներդաշնակօրէն համադրուեցին ա-
րեւելեան մուղաբազին, հայկական հոգեւոր երաժշտութիւնը եւ վրացա-
կան բազմաձայնութիւնը: Դրա շնորհիւ Թիֆլիսում ձեւաւորուում է որա-
կապէս նոր երաժշտութիւն՝ մէկ այլ մակարդակի բարձրացնելով արեւել-
եան երաժշտական արուեստը»²¹:

Գայսարեանը այս երեւոյթը դիտարկում է այլ տեսանկիւնից. «Մշու-
ղական արուեստը սկզբնական շրջանում գտնւում էր պարսկական ա-
ւանդոյթի ուժեղ ազդեցութեան տակ: ...Սայեաթ-Նովան իր հզօր եւ բազ-
մաձայն շնորհիւ միջոցով (ոչ միայն հայերի, այլ նաեւ վրացիների) ժողովր-
դական երգիչների արուեստը թերւում է դէպի ազգային»²²: Ինչպէս նկա-
տում ենք, այս կարծիքը համահունչ է Բախչինեանի տեսակէտին: Մաս-
նաւորեցնելով հնչեցուած կարծիքները՝ կարող ենք ասել, որ հայերէնի
պարազայում Սայեաթ-Նովան, հրաժարուելով գրաբարից եւ ընտրելով
թիֆլիսահայ բարբառը, իր արուեստը առաւելագոյնս մօտեցնում է իր եր-
գերի հասցէատէրերին²³: Նա կենդանի լեզուական նշանագրի ճիշտ ընտ-
րութեան շնորհիւ կարողանում է իր արուեստը անմիջականօրէն հաղոր-
դակից դարձնել 1750ականներին Թիֆլիսում բացարձակ մեծամասնու-
թիւն կազմող հայութեանը²⁴:

Նկատենք, որ Սայեաթ-Նովայի երգերը 1890ականների թիֆլիսահայ
քէֆ անող կանանց, սովորական խանութում քէֆչիների (որոնց սեղանին
«գինին էր դրած ու խարուածն առջեւնին»²⁵ երգեցնում են 70 տարեկան

ծերունու), ինչպես եւ հայ մտաւորականների քէֆի ուրախութեան զարդն էր:

Գրաքննադատ, հրապարակախօս Ադրալեանը իր «Սայեաթ-Նովայի Հետ» (1944) յօդուածում գրում է. «Մեր սիրելի Յովհ. Թումանեանը շատ էր սիրում այդ եղանակն ու երգը եւ ամէն անգամ, որ նրա սեղանին նստած խմում էինք Կախէթի գինին՝ ստիպում էր երգել այդ [*«Ղուն Էն Գլխէն Իմաստուն Բա»*] երգը»²⁶: Այս փաստը հաստատում է նաեւ Աւետիք Բահակեանը. «...մեր բոլոր խնջոյքներում երգում էինք նրա (*Սայեաթ-Նովայի - Տ.Ս.*) տաղերը, որոնք գրեթէ մոռացուած էին: Վստահ կարող ենք պարծենալ, որ մենք (*«Վերնատան»* պարապմունքների մասնակիցները – Տ.Ս.) վերակենդանացրեցինք նրան, տարածեցինք նրա համբաւը եւ արծարծեցինք նրա երգերը»²⁷:

Համաժողովրդական սերը երեւում է նաեւ 1914 Մայիսի 15ին՝ շիրմաքարի բացման ժամանակ, երբ տարբեր ազգերի Սայեաթնովասեր թիֆլիսաբնակներն ուղեւորում են նրա գերեզման: Շատերի կրծքներին էր Սայեաթ-Նովայի սիրած ծաղիկը՝ կարմիր վարդը²⁸: Նոյն իրողութեան մասին կարդում ենք նաեւ Հասարթեանի յօդուածում, որ «*Թիֆլիսի* բոլոր լեզուներով խօսող բազմահազար *բնակիչներ, համքարներն իրենց դրօշակներով, հայկական դայրոցի աշակերտներ, բանուորներ, ծառայողներ, գիտնականներ, գրողներ եւ արուեստի գործիչներ, իւրաքանչիւրի կրծքին մի կարմիր վարդ (ընդգծումը հեղինակինն է - Տ.Ս.), որպէս երգչի սիրոյ սիմվոլը՝ այդ օրուայ խորհրդանշանը, շարժում են դէպի Կաթողիկէ եկեղեցին...*»²⁹: Այս երկու մէջբերումները լաւագոյնս ցոյց են տալիս Սայեաթ-Նովայի վերագգային լինելը³⁰, այլ մշակոյթներին պատկանելու իրողութիւնը:

Մշակութային սահքը երեւում է ոչ միայն խօսքային (բանաստեղծական), երաժշտական (մեղեդիներ) եւ այլ, նաեւ՝ գործիքային մակարդակում: Սայեաթ-Նովան նուագում էր հիմնականում քամանչա (Յունաստան, Մերձաւոր Արեւելք, Հարաւային Կովկաս), սազ (Մերձաւոր Արեւելք, Հարաւային Կովկաս), չոնգուրի (վրաց-աջարական): Գործիքների աշխարհագրական ընդգրկումը արդէն իսկ խօսում է, թէ Սայեաթ-Նովան ի՛նչ մշակոյթների էր անուղղակի հաղորդակից³¹:

Վերը ասուածից կարող ենք եզրակացնել, որ թիֆլիսեան միջավայրը եւ Հերակլ Բ.ի պալատական միջավայրը Սայեաթ-Նովայի համար ապահովում են ոչ միայն լեզուական բազմազանութիւն հիմնանշանակային (denotative) մակարդակում (իբրեւ առաջնային մոդելաւորող համակարգ), այլ նաեւ՝ մակաբերական (connotative): Այսինքն՝ լեզուն հիմք է դառնում Սայեաթ-Նովայի համար այլ նշանային համակարգեր ներթափանցելու, պարսկական, թուրքական, վրացական, հայկական մշակոյթների խաչմերուկում ապրելու, ստեղծագործելու ու համադրելու: Ինչպէս նկատում

ենք, լեզուական ու մշակութային սահքի միջավայրում՝ արեւմտեան (քրիստոնէական) եւ արեւելեան (մահմեդական) մշակոյթների արանքում, ստեղծում է Սայեաթ-Նովայի նոր որակի արուեստը, գրականութիւնը, աշուղից բանաստեղծ դառնալը: Բացի այդ՝ լեզուական հիմնանշանակ եւ մշակութային մակաբերական համակարգերի արանքում է ձեւաւորում նրա նոր մակաբերական լեզուն, երբ արեւելեան անանձնական աշուղականին գալիս է փոխարինելու նրա անձնական պոեզիան:

Ըստ Մարգարեանի՝ նման բազմալեզուութիւնը առկայ էր Թիֆլիսում իր սկզբնաւորման առաջին օրերից մինչեւ 1920-30ականները: «*Թիֆլիսը, - գրում է պատմաբանը, - սինկրետիստական քաղաք էր իր սինկրետիկ մշակոյթով եւ սինկրետիկ լեզուով, որը նրան դարձնում էր անկրկնելի եւ աշխարհի ոչ մի քաղաքի չնմանուող: Հելլենիստական քաղաքների բնակչութեան պէս, Թիֆլիսի բնակչութիւնը բազմազգ ու բազմալեզու էր: Թիֆլիսեցիների մեծ մասը խօսում էր վրացերէն, հայերէն, թուրքերէն, իսկ 19րդ դարից սկսած նաեւ ռուսերէն: Մակայն դրանցից ոչ մի լեզու գոյութիւն չունէր եւ չէր էլ կարող գոյութիւն ունենալ մաքուր վիճակում*»³²: Ինչպէս նկատում ենք, պատմաբանը անուղղակի կերպով մատնանշում է փոխազդեցութեան մասին, երբ ոչ մի լեզու չի դրսեւորում իր մաքուր բառապաշարային, քերականական, շարակարգային մակարդակներով: Եւ հենց սրանում էր թիֆլիսեան բազմալեզու միջավայրի համն ու հոտը: Մարգարեանը նկատում է, որ քաղաքային *կոյնէն*, որը հայերէնի, վրացերէնի, թուրքերէնի, պարսկերէնի եւ ռուսերէնի խառնուրդ էր, դրսեւորում էր հիմնականում մէկ այլ սահքի միջավայրում՝ շուկայում³³: Ադասի Այվազեանը իր «Թիֆլիսի Յուցանակները» պատմութեան հերոս Գրիգորի միջոցով թողել է մեզ քաղաքային *կոյնէն*ի փայլուն օրինակներ՝ գրուած Շայթան Բազարի ցուցանակի վրայ. «*Բարեւ, կաջօ, մարդ-օրմին. Դօճրս ւելաբեկ*» (բարի մարդ - *S.U.*) կամ «*Ճօճու ու յաւալամ (հետեւիք ցուցանակին - S.U.)*»: Այս օրինակներով Այվազեանը թաքնուած կերպով ծաղրում է տեղաբնակների ռուսերէն չիմացութիւնը: Իսկ լեզուների հանդիպումը պայմանաւորուած է թիֆլիսեան միջավայրում լեզուի շաղախուած կիրառութեամբ: Սա հայերէնի-վրացերէնի-ռուսերէնի «հանդիպման» գրութիւն է:

Բազմալեզուութիւնը բազմամշակութային միջավայրի համար պարարտ հող է ստեղծում մշակոյթի զարգացման, մշակութային «պայթիւնների» համար: Նմանատիպ «պայթիւնային» միջավայր էր Աւստրո-Հունգարիան, Հարսբուրգեան Կայսրութեան տարածքը: Ֆրանց Կաֆկան հենց այս միջավայրի ծնունդ էր, որը գտնուում էր միքանի ազգերի (չէխ, գերմանացի եւ չէխերէն կամ գերմաներէն խօսող հրեաներ), երկու լեզուների (չէխերէն, գերմաներէն) եւ նուազագոյնը երեք մշակոյթների (չէխական, գերմանական, հրեական) արանքում: Այլ խօսքով՝ երկու հիմնաշնանակ

ու նուագագոյնը երեք մակարերական նշանային համակարգերի միջավայրում: Այս ամենին գումարում են ինքնութեան որոնման խնդիրը³⁴, քաղաքական, ընտանեկան, միջանձնային խնդիրները, որոնց արդիւնքում էլ էլ աւելի են սրում նրա ստեղծագործութիւններում արծարծուող խնդիրները: Այս ամենի հետեւանքով էլ նրա շարակարգը, պատումի ձեւը յարացոյցային նշանակութիւն է ստանում Ի. դարի գրականութեան մէջ: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ բազմալեզու հաղորդակցական միջավայրը հիմք է դառնում մշակոյթների երկխօսութեան, համադրման համար: Այժմ տեսնենք, թէ Մայեաթ-Նովայի՝ պարսկական սրից ընկնելուց (1795)՝ 45 տարի անց, ինչպիսի տեսք ունէր Թիֆլիսը:

ՀԻՆ ԹԻՖԼԻՍԸ ԱԲՈՎԵԱՆԻ ԱՉՔԵՐՈՎ

Գերմաներէնով գրուած Աբովեանի «Ակնարկ Թիֆլիսում Ապրող Հայերի Կեանքի Եւ Յատկապէս Նրանց Հարսանեկան Սովորութիւնների Մասին» գրութիւնը նոյնպէս հետաքրքրական է այն առումով, որ այստեղ Թիֆլիսը նորից հանդէս է գալիս իբրեւ մշակոյթների, Արեւելքի եւ Արեւմուտքի արժէքների խաչմերուկ, արեւելեան եւ արեւմտեան արտադրանքների հանդիպման միջավայր: Աբովեանը մինչեւ իր բուն նիւթին՝ հայերի ամուսնութեան բարքերին անդրադառնալը, նկարագրում է 1830-40ականների Թիֆլիսի համայնական պատկերը (դպրոց, եկեղեցի), քաղաքային տարածքը, ժամանցային ենթակառուցուածքը (բիլիարդանոց, զարեջրանոց, ակումբ են.):

Ա. Քաղաքային Տարածք

Աբովեանը յստակ մի քանի մանրամասներով նշում է, թէ ինչպէս է հին Թիֆլիսը բարեփոխուում հայկական *«բարեմիտ, իմաստուն կառավարութեան» ջանքերի շնորհիւ ու «անընդհատ բարգաւաճելով հնարատրութիւն է ստեղծում յօգուտ այդ երկրի»*³⁵:

Քաղաքային կառավարութիւնը «կարճ ժամանակի ընթացքում» քաղաքային տարածքը «աղբակոյտից» վերածում է նոր որակային միջավայրի: Աբովեանի համար քաղաքային տարածքի չափորոշիչներ են դառնում «կանոնաւոր փողոցները», երկու կողմերով սարքուած մայթերը, ինչի շնորհիւ քաղաքացին կարող էր հանգիստ խուսափել *«զարհուրելի ցեխից, որը յաճախ ճահճանման գոյանում է անձրեւային օրերին կաւահողի պատճառով»*³⁶:

Ըստ էութեան Աբովեանը ցոյց է տալիս, թէ ինչպէս է անմշակ բնութիւնը մարդու աշխատանքի շնորհիւ վերածուում **քաղաքային միջավայրի**: Ասուածը փաստարկենք հետեւեալ հատուածով. *«Լեռնագագաթները եւ բարձունքները հարթում են, այգիներն ու հովիտները վերացում եւ նրանց տեղ հանդէս են գալիս կանոնաւոր փողոցներ, զեղեցիկ, երոսպական շինարարական ճաշակով կառուցուած փառահեղ շէնքեր, որոնք ի-*

րենց արտաքին շքեղութեամբ եւ ներքին յարմարութիւններով գրեթէ ետ չեն մնում եւրոպական տներից»³⁷: Վերը նկարագրուածից կարող ենք եզրակացնել, որ Արովեանը թաքնուած կերպով բնութեան (լեռնագագաթներ, բարձունքներ, այգիներ, հովիտներ, ցեխ) եւ քաղաքային մանրամասների (փողոց, սալարկուած մայթեր, շէնքեր) հակադրման շնորհիւ նշում է հայկական քաղաքային կառավարութեան շնորհիւ Թիֆլիսին եւրոպական քաղաքի տեսք հաղորդելու փաստը:

Իսկ ինչպիսի՞ն էր Թիֆլիսը նախքան «իմաստուն կառավարութեան» ի յայտ գալը: Ըստ Արովեանի՝ մօտաւորապէս տասը տարի առաջ՝ 1830ին, Թիֆլիսը «աւագակային որջ էր... լեզգիներին եւ այլ հարեւան, մինչեւ այսօր էլ անկուլտուրայական ժողովուրդների համար, որոնք տնօ-րինում էին նրա բախտն ըստ իրենց քմահաճոյքի», բայց արդէն մարդու ստեղծագործ աշխատանքով բնութեան տարածքը մշակելու շնորհիւ, այն դառնում է քաղաք, որն արդէն «կարող էր եւրոպական քաղաքների շարքը դասուել»³⁸:

Նկատենք, որ քաղաքը Քաղաք է դառնում այլ ժամանցային ենթակառուցուածքների շնորհիւ:

Բ. Ժամանցային Եւ Իջեանային Ենթակառուցուածքներ

Արովանը ուշագրաւ տեղեկութիւն է յայտնում Թիֆլիսում ապրող գերմանացիների մասին: Թիֆլիսի բիլիարդանոցի եւ գարեջրատների «տէրերը բացառապէս գերմանացիներ են, ոմանք՝ տեղիս կոլոնիստներից (գաղութարար – S.U.), ոմանք էլ՝ եկուոր գերմանացիներից, որոնք, ըստ երեւոյթին, լինելով հասարակութեան անպէտք անդամ իրենց հայրենիքում, այստեղ են եկել բախտ փորձելու, որը, սակայն, յաճախ դաւաճանում է նրանց, որովհետեւ նրանք դժբախտաբար չափազանց անզգուշ կերպով են նուիրում Կախէթի գինու վայելքին»³⁹: Յատկապէս եկուոր գերմանացիների առիթով Արովեանի միտքը, կարծում ենք, հիմնաւորուած չէ, քանի որ պատահական գերմանացի դժուար թէ կարողանար յայտնուել ցարական Ռուսաստանի տարածքում:

Ինչպէ՞ս են գաղութարար գերմանացիները յայտնում Հարաւային Կովկասում:

Վիրտենբերգցիները Թիֆլիս եւ նրա յարակից տարածքներում են յայտնում իրենց ոչ-ուրախ կեանքից: Վիրտենբերգցիների հայրենիքից հեռացումը պայմանաւորուած էր նապուլեոնեան զօրքի ջարդից յետոյ, գիւղացիների եւ արհեստաւորների տնտեսական վիճակի ծանրութեամբ: Դրան գումարած վերջին տարիների ցածր բերքատուութիւնը՝ վատ եղանակով պայմանաւորուած: Բացի այդ՝ 1816ին այնպիսի սով էր, որ մարդիկ սոսինձ էին ուտում, խխունջ, ծառերի արմատներ, խոտ եւն.⁴⁰:

Տրիդրիխ Վիլհելմ թագաւորի մահուանից յետոյ (1861) սկսում է գահակալել Վիլհելմ Ա.ը (1861-1888), որը բացում է թագաւորութեան սահ-

մանները: Բազմաթիւ գաղթականներ իրենց ընտանիքներով մեկնում են ԱՄՆ եւ Ռուսաստան՝ Նովոռոսիսկի տարածքում վերաբնակուելու համար: Մակայն, Հարաւային Կովկասի նահանգապետ, գեներալ Ա.Պ. Երմոլովը (1777-1861) մեծ դժուարութեամբ, 1817-1818 թթ. նրանց բնակեցնում է Հարաւային Կովկասում «երոպական քաղաքակրթութեան» շունչ բերելու համար, որ սովորեցնեն տեղացիներին նաեւ գիւղատնտեսական հմտութիւններ⁴¹: Գերմանացիները իրենց հմտութիւնները ցոյց են տալիս Թիֆլիսում: Աբովեանը գրում է, որ բոլոր գաղթական գերմանացի ատաղձագործները, դարբինները, դերձակները, վարսաւիրները, ժամագործները «դժբախտաբար շատ շուտ սովորել են իրենց ապրանքները չափազանց թանկ գնով վաճառել»⁴²: Ասուածը հիմք է տալիս պնդելու, որ նրանց առաջարկած ծառայութիւնները մրցունակ էին: Յայտնի է եթէ ապրանքը պահանջուած է, ուրեմն այն մրցունակ է, որակն էլ բարձր:

Թիֆլիսում հնարաւոր էր յաճախել ազնուականների ակումբ, որտեղ «կարելի էր զանազան լեզուներով լրագրէր կարդալ...»⁴³: Ի դէպ, հետաքրքիրն այն էր, որ խնջոյքների ժամանակ կարելի էր զգալ «սիզարների եւ բալէնու ծխամորճի ծուխը»⁴⁴: Բազմալեզու թերթերի բազմազանութիւնը վկայում էր բազմալեզու Թիֆլիսի բնակչութեան մասին, որը հաղորդակից էր նաեւ եւրոպական կենցաղի մանրամասներին (սիզարներ), ինչը խօսում է առեւտրային սերտ կապերի մասին: Հենց այս կապերի առկայութեան պարագայում էլ քարւանսարայները, հիւրանոցները հեշտացնում էին առեւտրականների կացութիւնը Թիֆլիսում: Փաստօրէն, 1840ականներին Թիֆլիսի բնակչութեան լուսաւորութեան եւ եւրոպականացման գործում մեծ դեր են խաղում ռուսները, գաղութարար գերմանացիները եւ քաղաքին եւրոպական տեսք տուող Թիֆլիս քաղաքի հայ կառավարիչները:

Գ. Թիֆլիսի կրթօջախները

Ըստ Աբովեանի՝ Թիֆլիսի ամենալաւ կրթօջախները ռուսական էին: Օրինակ՝ գիմնազիայում տասնչորս ուսուցիչներով 300 աշակերտի տալիս էին հիմնաւոր կրթութիւն սովորեցնելով ռուսերէն, գերմաներէն, ֆրանսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, պարսկերէն: Ռուսական հոգեւոր ճեմարանները եւս աչքի էին ընկնում կրթական որակով: Եթէ ռուսականում ապագայ հոգեւորականներին սովորեցնում էին «բացի ռուսերէնից եւ վրացերէնից նաեւ թուրքերէն, լատիներէն, օսերէն ու յունարէն», ապա «հայկականում դժբախտաբար ոչինչ չեն սովորում, բացի փոքր ինչ ռուսերէնից, հայերէնից...»⁴⁵: Դասաւանդուող լեզուներից կարելի էր արդէն հասկանալ, թէ ինչպիսի մարտավարութիւն ունէին ռուս ուղղափառ եկեղեցին եւ հայ եկեղեցին, որը լուրջ բարեփոխումների կարիք ուներ: Վերջինս նախեւառաջ պետք է հրաժարուէր կրօնաբոյր/հնաւանդ կրթական սկզբունքներից եւ անցում կատարէր աշխարհիկի: Այլ խօսքով՝

լուսաւորութեան գաղափարները դեռ չէին հասել հայկական կրթօջախներ:

Դ. Թիֆլիսի կրօնական Բազմազանութիւնը

Մշակութային, կրօնական սահքի միջավայրի հետեւանք կարելի է համարել նաեւ Թիֆլիսում խոյացող եկեղեցիների բարձր գմբէթները: «6-7-ը ռուս-վրացականն են,- գրում է Աբովեանը,- 8-ը հայկական, մէկը կաթոլիկական, մէկը մահմեդական, եւ որոնք կարծես մրցութեան մէջ են մտել առաջնութիւն ձեռք բերելու համար»⁴⁶: Ըստ Աբովեանի՝ 1840ականների Թիֆլիսում կրօնական մրցոյթում ամենաառաջատարը ռուսական եկեղեցին էր, քանի որ «ամէնից շատ հոգ էր տանում իրեն յանձնուած հօտի կրթութեան մասին, իսկ միւսները դեռեւս սպասում են աւելի լաւ ապագայի»⁴⁷: Լուսաւորութեան գաղափարների կրող Աբովեանը, բնական է, պէտք է բարձր գնահատէր ռուսական եկեղեցու գործունէութիւնը:

Ե. Եւրոպական եւ արեւելեան տարրերի անհամադրելի համակեցութիւնը (հագուստ, երաժշտութիւն)

Աբովեանը նկատում է, որ արեւմտեան եւ արեւելեան մշակոյթների հանդիպման արդիւնքում մարդիկ ի վիճակի չէին տարբեր մշակոյթների հագուստները «խօսեցնելու»⁴⁸: Օրինակ, ծիծաղելի է նրա համար, երբ «Ֆրանսիական թասակի տակ տեսնի իսկական վրացական հագուստ, կամ թէ միւսին տեսնի զբօսնելիս վրացական գլխարկով եւ եւրոպական վերարկուով, կամ թէ մի տղամարդու պատահի՝ գլխարկը պարսկական, փողկապը եւրոպական, իսկ միւս զգեստները՝ տեղական տարազով, եւ այդ բոլորը իրենից կը ներկայացնի խայտաբղետ հակադրութիւն»⁴⁹: Անհամադրելի համադրումը Աբովեանը նկատում է նաեւ կահոյքի դէպքում եւ ընդհանրապէս ներքնամասում:

Թիֆլիսում համադրում է նաեւ անհամադրելի երաժշտութիւնը: Օրինակ, «որեւէ պարահանդէսի կամ հասարակական խրախճանքի ժամանակ» կարելի էր լսել միաժամանակ զինուորական երաժշտութիւնը եւ երգեհոնիկը՝ իր կանոնաւոր հնչիւններով, «աղմկոտ, ականջ ծակող ոռնոցը» եւ մազուրկան, ֆրանսիական կադրիլը եւ «լեզգինկայի զարհուրելի մոլեզին աղմուկը»⁵⁰:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 1830-1840ականների Թիֆլիսը իր կառուցուածքով, կանոնաւոր փողոցներով, ժամանցային ենթակառուցուածքով, եւրոպական տարրերով քաղաքի տեսք ունէր, որտեղ գերակշռողը կրօնական բազմազանութիւնն էր: Բայց սրան կից՝ հին Թիֆլիսը չհամադրուած երաժշտութեան, հագուստի միջավայր էր: Սա էլ ինքնին յուշում է, որ քաղաքային բնակչութեան մտածողութիւնը դեռ պատրաստ չէր հրաժարուել հնից, նորն էլ ի վիճակի չէր ճաշակով համադրելու: Անճաշակութիւնը երեւում էր հագուկապի մէջ (շարակարգային մակարդակ): Հետեւաբար նրա գիտակցութեան մէջ դեռեւս տարորոշուած ու

խառնուած էին տարբեր ազգերի հագուստները, ոճերը (յարացոյցային մակարդակ):

ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԽՐԱԽՃԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ՝ ԸՍՏ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ԱՂԲԱԼԵԱՆԻ

Հին Թիֆլիսը, ըստ Թումանեանի, այսպիսին էր. «*Էն մի առանձին, իւրատեսակ աշխարհ էր, որի մէջ եկել, միացել էին կովկասեան ժողովուրդներն ամենքն իրենց առանձնայատուկ կեանքով ու երանգով եւ յորինել էին ազգերի մի վերին աստիճանի գրաւիչ ու հետաքրքրական խառնուրդ ու կեանք: Եւ որովհետեւ էդ կեանքին տոն տուողը վրացական անհոգ ու զուարթ ոգին էր, էդ պատճառով էլ հին Թիֆլիսը իրարով խորթ տարրերի էթնոգրաֆիական մի ժողովածու չէր հանդիսանում, այլ մի ուրախ հարսանքատուն, ուր հրաւիրուած էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը - քէֆ քաշելու»⁵¹:*

Այս հաստուածը կարելոք է մեզ համար նրանով, որ հին Թիֆլիսը՝ ա. տարբեր արժեքաբանական համակարգերի տարածք էր: Այս խնդրին Թումանեանը անուղղակի կերպով անդրադառնում է նաեւ իր «Սայեաթ-Նովայի Երգերի Բնատրութիւնը» (1913) յօդուածում. «*Թիֆլիսը,- գրում է նա,- Կովկասի լեռների անցքի առջեւ տարածուած մեծ հանգոյցն է եղել հին ժամանակներից, նրա մէջ եկել, խառնուել, միացել էին Արեւելքի զանազան ժողովուրդները իրենց բարբառներով, կրօններով, փիլիսոփայութիւններով ու ազգային ստեղծագործութիւններով ու ստեղծել էին մի ինքնատիպ քաղաք, որի վրայ հիանում էր ամբողջ Փոքր Ասիան եւ Մերձաւոր Արեւելքը»⁵²: Նման բնութագրումը վկայում է, որ Թիֆլիսը մի իւրօրինակ «եռացող կաթսայ էր» դառնում տարբեր ազգերի, մշակոյթների արժեքների բախման, երկխօսութեան առումով⁵³:*

Այս նոյն գաղափարը փաստարկելի է նաեւ Աղբալեանի դիտարկումով: Նա Թիֆլիսում հայերի երկլեզուութեան մասին իր «Սայեաթ-Նովայի Հետ» յօդուածում (1944) գրում է, որ «*հայերը մայրենի լեզուի պէս գիտէին վրացերէն եւ հայ ու վրացի շատ մտերիմ էին»*⁵⁴: Անգամ ընդհանուր էին որոշ սրբատեղիներ, օր.՝ Թելեթիի, Ծղնեթիի եւ Շահնաբադիի եկեղեցիները «*տօնական օրերին հայ ու վրացի ուխտաւորներով լիքն էին»*, *անգամ «Վարդան Մամիկոնեանի դստեր՝ Շուշանիկի գերեզմանը... հաւասարապէս հայի ու վրացու պաշտամունքի առարկան էր. միեւնոյն հոյակապ եկեղեցու մէջ հայ ու վրացի պաշտօն էին մատուցում հերթով»*⁵⁵: Սա վկայում է հայ-վրացական կրօնական հանդուրժողութեան մասին, ինչը հնարաւորութիւն էր տալիս հերթափոխով պատարագ մատուցելուն: Անգամ կրօնական տարածքում՝ եկեղեցում էր «*իշխում»* լեզուական սահքը:

բ. Հին Թիֆլիսը «*մի ուրախ հարսանքատուն...*» էր, որտեղ համերաշխ կերպով հաստում են կովկասեան «*ազգերն ու ցեղերը»*՝ քէֆ անելու: Ըստ

Թումանյանի՝ դրան «տոն տուողը վրացական անհոգ ու գուարթ ոգին» է⁵⁶: Հետաքրքրական է, որ 1913ին «Երկու Մեծ Թիֆլիսեցիները» յօդուածում արտայայտած այս միտքը գրեթէ նոյնութեամբ կրկնում է Թումանյանը 1920ին գրած «Վրաց Բանաստեղծութիւնը» յօդուածում. «Հին Թիֆլիսը, Սայեաթ-Նովայի նման, թէև սինթէզ է արեւելեան շատ ժողովուրդների կեանքի եւ հոգեւոր հզօրութեան, այնուամենայնիւ, գերազանցօրէն կրում է վրացական ոգի»⁵⁷: Ինչպէս նկատում ենք, հին Թիֆլիսում ըստ Թումանյանի թելադրողը «վրացական ոգին էր», մինչդեռ ժողովրդագրական առումով հայերը միշտ շատ են եղել հին Թիֆլիսում:

Նոյն այս միտքը այլ մանրամասնութիւններով կարողում ենք «Երկու Մեծ Թիֆլիսեցիները» յօդուածում, որտեղ Թումանյանը գրում է Թիֆլիսից ստացած իր առաջին տպաւորութիւնների մասին: Երբ առաջին անգամ իր հայրենի օրրանից՝ Դսեղից, 1883ին գալիս է Թիֆլիս, ապա Թիֆլիսը բացում է իբրև «մի հսկայական հարսանքատուն: Չուռնա, դեղ, դայիրա, նաղարա, ծափ-ծիծաղ, պար, երգ... Էն էլ ոչ թէ տներում, այլ դուրսը, դռներին, կտուրներին: ... Կիրակի ու տօն օրերը հօ - գլուխ բեր, որ դիմանայ: Չուգուած, զարդարուած շրթիկում ու գրընգում էր ամբողջ քաղաքը»⁵⁸: Ինչպէս նկատում ենք՝ քէֆը, ուրախութիւնը չի մնում անհատի տան սահմաններում, այլ դուրս է գալիս ընկերային տարածք⁵⁹: Սա քէֆ է, որի ուղղակի եւ անուղղակի մասնակիցը կարող է դառնալ հարեւանը, անցորդը: Սա մի ոչ-ներամփոփ մարդու քէֆն է: Մարգարեանը գրում է, որ Թիֆլիսի տղամարդիկ «մեծամասամբ տանը չէին անցկացնում իրենց ժամանակը: Բացի իրենց առետրային կրպակներից, խանութներից, շատ էին ժամանակ ծախսում փողոցներում, հրապարակներում, բաղնիքներում, պանդոկներում (խսկական թիֆլիսեցին չի ուտում միայնակ, անգամ տանը)»⁶⁰: Քէֆ անելու նման կերպը տիպիկ արեւելեան է: Եւրոպականի պարագայում «չուռնան, դեղը, ծափ-ծիծաղը, պարը, երգը» ձայնը կարող էր խանգարել ուրիշի քունը, անդորրը: Նման քէֆը անհատի անձնական տարածքի գրաւում է, եւրոպական ընկերային յարաբերութիւնների արժեհամակարգում:

Հետաքրքրական է, որ Թիֆլիսի նոյն խրախճանական միջավայրի մասին է խօսում Աղբալեանը իր «Սայեաթ-Նովայի Հետ» յօդուածում. «Վրացին ուրախ եւ անհոգ ժողովուրդ էր. երկրի հին տէրերն էին: Հայերը նրանց մէջ ապրելով նրանց պէս դարձած էին ուրախ եւ սրտաբաց: Խնջոյքն ու քէֆը սովորական էր, իսկ ուրախ հաւաքոյթները թաղերի մէջ, երեկոյեան մօտ, երբ տան գործն ու աշխատանքը վերջացած էին, մի բնական պահանջ էր կարծես»⁶¹:

Աղբալեանի այս յօդուածը բացառիկ է այն իմաստով, որ մանրամասն նկարագրում է, թէ ինչպէս էին քէֆ անում կանայք եւ տղամարդիկ: Աղջիկները սովորաբար մէկի տան բակում էին հաւաքում՝ «դափի ներդաշ-

նակ հարուածով եւ բերանի եղանակումով սկսում էին պար գալ երկար, սրախօսելով ու քրքջալով, միջահասակ կանայք տան դռներին նստած խմորվին բամբասում էին կամ կատակում եւ անվերջ ու սրտանց ծիծաղում: Երբեմն աղջիկներից մէկն ու մէկը դուրս էր գալիս ու սրանց քաշում ներս եւ ստիպում, որ պարեն: Աղմուկն ու ծիծաղը բռնում էր տուն ու երդիկ»⁶²: Մէջբերուած հատուածը վկայում է, որ տարբեր էին նաեւ կանանց տարիքային խմբերի հետաքրքրութիւնները, բայց պարը միաւորում է «միջին տարիքի» կանանց երիտասարդ սերնդի հետ:

Իսկ ի՞նչ երաժշտութիւն էին լսում թիֆլիսաբնակ հայ կանայք: Թիֆլիսի Հաւլարար թաղամասում ապրող քոռ Մայուն էին կանչում, որ քամանչա էր նուագում եւ «հաճելի ձայնով» վրացերէն ու հայերէն երգում, շատ յաճախ էլ ձայնակցում էին նրան, որից յետոյ «դափն առնում եւ սկսում պարի եղանակ եւ պարում մեծ եռանդով ու սրտանց. երեւում էր նաեւ հոգեպահուստ օղի կամ գինի, որ խմում էին իրար կենաց՝ սրախօսելով ու երբեմն չարախօսելով, բայց անցած-գնացածի մասին եւ ճրագները վառելուն մօտ ցրում տները, գործից դարձող իրենց ամուսիններին դիմաւորելու»⁶³: Մէջբերուած հատուածը յստակ ցոյց է տալիս, թէ ամանդական կինը ինչպէս է կազմակերպում իր իսկ խրախճանքը: Այսպիսի միջավայրում գրեթէ չկար տղամարդ: Կանանց խրախճանքին մասնակից էր երգիչ «քոռ Մային», որն իր տեսողութեան բացակայութեան պատճառով կանանց համար անվտանգ էր, ի վիճակի չէր կանանց գննելու: Անվտանգ էին նաեւ վեց-եօթ տարեկան տղայ երեխաները, որոնք «մարդահաշիւ» չէին կամ աւելի ճիշտ տղամարդահաշիւ չէին: Հենց այստեղ էլ փոքրիկ Նիկոլը լսում ու մտապահում էր Սայեաթ-Նովայի երգերը⁶⁴:

Նոյն կերպ էին քէֆ անում նաեւ տղամարդիկ: Աղբալեանի հայրը, ինչպէս ինքն է ասում «քէֆ սիրող արհեստաւոր էր, սիրում էր լաւ խմել ու խաղ կանչել, սովորաբար, թաթար բայաթիներ, մանաւանդ երբ իր ազգականները գալիս էին գիւղից: Տունը դառնում էր մի հարսանքատուն, գինին հոսում էր, խորովածի շամփուրները լիքը գալիս, դատարկ դուրս էին գնում, դուրս ու ներսի մարդը չէր տարբերում (շեշտադրումը մերն է - Տ.Ս.), ամէնքին գինի եւ տաք միս էին հրամցնում եւ սուր խօսքը, կատակն ու տրտում բայաթին յաջորդում էին իրար: Գինուց ու երգից աչքս փակում էր եւ լուսադէմին աչքս բանալով՝ տեսնում էի դեռ սուփրան գցած եւ խմողների կատարը տաք»⁶⁵: Ինչպէս տեսնում ենք, նոյն խնճոքային միջավայրն էր նաեւ տղամարդու կազմակերպած քէֆին, որին, ի տարբերութիւն կանանց խնջոյքների, դրսից կարող էին մասնակցել ոչ միայն արեւնակցական բարեկամները, այլ նաեւ օտար բարեկամները («դուրս ու ներսի մարդը չէր տարբերում»):

Վերը նկարագրուածից կարելի է եզրակացնել, որ հին Թիֆլիսը ապրում էր իր ներքին տրամաբանութեամբ: Եւ հետաքրքրական է, որ Թու-

մանեանը հին Թիֆլիսը դիտում է իբրև ինքնաբաւ քաղաք. «*մի առանձին ինքնուրոյն աշխարհք ու զուարթ կեանք էր ներկայացնում իր համով հոտով, լեզուով ու աղայթով, աղ ու հացով, նիստ ու կացով*»⁶⁶, որտեղ մեծ դեր էր խաղում կախերական գինին: Բացսիրտ քէֆը չէր կարող կայանալ առանց գինու եւ նրա ազդեցութեան: Հին Թիֆլիսում գինին ձեւաւորում է անձնական ուրախութիւնը՝ հանրութեանը ի ցոյց դնելու եւ միաներին էլ իր սեփական քէֆին համամասնակից դարձնելու առումով: Թիֆլիսեան միջավայրում գինու շնորհիւ ձեւաւորում էր կարճաժամկէտ «մենքը»:

Զուռնա-դիոլի, ուրախ, պար եկող թիֆլիսեցիների, «գժի նման» հին Թիֆլիսը՝ ըստ Թումանեանի փոխում է: «*Ութսունական թուականներից սկսած*, - գրում է Թումանեանը, - *Թիֆլիսը սկսեց փոխուել-փշանալ, ուրիշ խօսքով ասում էին՝ վելիկի կնեազից (մեծ իշխան Միխայիլ Նիկոլաւիչից - Տ.Ս.) ետը մեր քաղաքը խարաբ եղաւ*»⁶⁷: Ինչպէս նկատում ենք, ցարական Ռուսաստանի Հարաւային Կովկասում կարելոր գործօն դառնալուց յետոյ ժողովրդական «ներքելի» գիտակցութեան մէջ հին Թիֆլիսի պատկերը քանդում է: Թումանեանը այս կարծիքի հետ համաձայն է եւ իր դիրքորոշումը փաստարկում է Բաֆֆու մի բանաստեղծութամբ.

*«Վաստ աղայթներ բերաւ
Միր քաղքումը Եւրոպէն,
Քէֆի ու սափէն դիփ կորաւ
Փըչացաւ էստեղանց օրէն»*⁶⁸:

Այս քառատողը մեզ համար կարելոր է այն հանգամանքով, որ Բաֆֆին զգում է արժեքաբանական յարացոյցի փոփոխութիւնը, այն է՝ իր հարազատ Թիֆլիս է ներխուժում ռուսական Եւրոպան, ինչի արդիւնքում էլ զուարթութեան փոխարէն գալիս է «հոգան ու ջափէն»⁶⁹, ինքնասպանութիւնները՝ ատրճանակով, կարբոլկա խմելով, կախուելով⁷⁰: Սակայն հարկ ենք համարում նկատել, որ, եթէ ռուսական Եւրոպան Թումանեանի համար անընդունելի է, ապա բուն Եւրոպան դիտում է իբրև զարգացած մշակութային քաղաքակրթութիւն: 1914ին Թումանեանը «Թ. Թորամանեանի Դասախօսութեան Առթիւ» յօդուածում անուղղակի կերպով անդրադառնում է Եւրոպայի ընկալմանը. «*...Եւրոպան էլ լոկ աշխարհագրական տերմին չի, այլ ժամանակակից քաղաքակրթութեան հայրենիքը...*»⁷¹:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Եզրակացնենք, որ հին Թիֆլիսը իր բազմալեզու միջավայրով պարարտ հող էր տարբեր մշակոյթների երկխօսութեան, փոխհարստացման: Հին Թիֆլիսը արեւելեան եւ արեւմտեան արտադրանքների (հագուստ), արժէքների, երաժշտութեան հանդիպման միջավայր էր: 1820-30ականներին քաղաքի եւրոպականացման գործում մեծ դեր են ունեցել հայերը, իսկ մտածողութեան փոփոխութեան առումով՝ գեներալ, գուբերնատոր

Երևույթը: Բացի այդ՝ քաղաքը հանդես է գալիս իբրև իրախճանակյան միջավայր, որն առանց վրացական գինու անհնար կը լիներ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Yervand Margarian, *Tiflis Kak Forma Jizni* (Թիֆլիսը իբրև կենսաձև), Երևան, Հրատ. 2014 (մամուլի տակ), էջ 8: Ծնորհակալություն ենք յայտնում պատմաբան Մարգարեանին իր մենագրության ձեռագիրը մեզ տրամադրելու համար:
- ² Նոյն:
- ³ Նոյն, էջ 5:
- ⁴ Որքան մեզ յայտնի է, ցարդ ՀՀում յատուկ Թիֆլիս քաղաքին նուիրուած են երկու մենագրություններ՝ (Yervand Margarian, *Tiflis Kak Forma Jizni*, եւ Vache Nalbandian, *Tbilisi V Armianskikh Literaturnikh Pamiatnikakh Drevnikh I Srednikh Vekov* (Թիֆլիսը հայ հնագոյն եւ միջնադարեան գրական յուշարձաններում) (թարգմ. հայերէնից Գ. Թաթոսեան), Երևան, Հայպետհրատ, 1961):
- ⁵ Վաչէ Նալբանդեան, *Սայեաթ-Նովա*, Երևան, «Սովետական Գրող» Հրատ., 1987, էջ 16: Իրականում պէտք է ասուէր պարզապէս թուրքերէն, ինչը միայն մէկ անգամ է հանդիպում Նալբանդեանի աշխատութեան մէջ (էջ 11): ԺԸ. դարում աղբրեջաներէն չէր կարող լինել, քանի որ Աղբրեջանի Հանրապետութիւնը հռչակուել է 1918ին: Խորհրդային տարիներին գրուած բոլոր ուսումնասիրություններում թուրքերէնի փոխարէն նշուում էր աղբրեջաներէն: Պատճառը այն էր, որ Խ. Միութեան գիտնականները ստիպուած պէտք է պահէին քաղաքական ճշգրտութիւնը: Աղբրեջաներէն անուանելու «աւանդոյթը» խախտում է խորհրդային կայսրութեան փլուզումից շուրջ հինգ տարի առաջ, երբ Բախչինեանն *Սայեաթ-Նովա*, *Խաղերի* իր առաջաբանում գրում է. «*աղբրեջաներէն բառը տուեալ դէպքում գործածուում է պայմանականօրէն*» եւ աւելացնում է, որ Սայեաթ-Նովան ստեղծագործել է թուրքերէն՝ Ղազախ-Բորչալուի շրջանի Այրումլուի բարբառով: «*Ձեւարանական-քերականական համակարգով այն բաւական տարբեր է ժամանակակից աղբրեջաներէնից*» (Նենրիկ Բախչինեան, «Առաջաբան» *Սայեաթ-Նովա*, *Խաղեր*, Երևան, ԵՊՀ Հրատ., 1987, էջ 5. նաեւ՝ Նենրիկ Բախչինեան, *Սայեաթ-Նովա. Կեանքը Եւ Գործը*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1988, էջ 48): «Սառոյցը» կոտրուում է, ոչ միայն յօդուածի տողատակում, այլ նաեւ մէկ անգամ սպրդում է թուրքերէն բառը յօդուածի հիմնական բնագրում («*Թուրքերէն երգերի բնագիրը Դաւթարից վերծանել է արեւելագէտ Ն. Գէորգեանը...*» (Բախչինեան, «Առաջաբան», էջ 10):
- ⁶ Նալբանդեան, էջ 16:
- ⁷ Ռ. Աբրահամեան, *Սայեաթ-Նովայի Տաղերը*, Թեհրան, Տպարան «Սոդերն», 1943, էջ 64:
- ⁸ Արամ Ղանալանեան, *Սայեաթ-Նովայի Ստեղծագործութեան Ժողովրդական Ակունքները*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1963, էջ 45-61:
- ⁹ Նոյն, էջ 45:
- ¹⁰ Suren Gaysarian, “Sayat-Nova (Predislovie)” (Նախաբան), *Sayat-Nova, Stikhotvoreniya* (Բանաստեղծություններ), *Լենինկրատ, «Սովետսկի Պիսատէլ» Հրատ.*, 1961, էջ 53:

- ¹¹ *Մայեաթ-Նովա, Խաղեր*, կազմ., խմբր. եւ ծանօթ. Մօրուս Հասարթեան, Երեւան, ՀՄՍՌ ԳԱ Հրատ., 1963, էջ 6-7:
- ¹² Մայեաթ-Նովայի եռալեզու միջավայրին է արդարադարձել Բախչինեանը (Բախչինեան, *Մայեաթ-Նովա. Կեանքը*, էջ 133-146):
- ¹³ «Նա անկրկնելի է իր անմիջականութեամբ ու պարզութեամբ, անօրինակ է իր նրբութեամբ ու գունազեղութեամբ...» (*Մայեաթ-Նովա, Խաղեր*, էջ XIX):
- ¹⁴ Ի. Գրիշաշվիլի, Գ. Լեոնիջե, *Հայաստանի Եւ Հայ Կուլտուրայի Մասին*, Երեւան, ՀՄՍՀ ԳԱ Հրատ., 1983, էջ 38:
- ¹⁵ Միսնն Չիքուանի, «Ես Զաւակը Չեմ Սայեաթ-Նովայի», *Եղբայրութեան Ճամփաներով*, Երեւան, Հայպետհրատ, 1955, էջ 14:
- ¹⁶ Հասարթեան, էջ XXXII. նաեւ` Հենրիկ Բախչինեան, «Սայեաթ-Նովա (Առաջաբան)» *Մայեաթ-Նովա, Խաղեր: Լիակատար Ժողովածու*, Երեւան, ԳԱԹ, 2003, էջ 9:
- ¹⁷ Բախչինեան, *Մայեաթ-Նովա, Խաղեր*, էջ 265:
- ¹⁸ Խաչատուր Աբովեան, *Երկեր*, կազմ.՝ Յ. Ն. Ֆելեքեան, առաջաբանը եւ ծանօթ.՝ Պիոն Յակոբեանի, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1984, էջ 600: Այս խնդրի վերաբերեալ անուղղակի տեղեկութիւններ կարելի է քաղել նաեւ Պիոն Յակոբեանի յօդուածից (Պիոն Յակոբեան, «Սայեաթ-Նովայի` Հաղպատի Վանքում Լինելու Հարցի Շուրջը» *Պատմաբանասիրական Հանդէս*, 1969, թիւ 3, էջ 209-225 [http://hpj.asj-oa.am/1381/1/1969-3\(209\).pdf](http://hpj.asj-oa.am/1381/1/1969-3(209).pdf)):
- ¹⁹ Հենրիկ Բախչինեան, «Սայեաթ-Նովա (Առաջաբան)» *Մայեաթ-Նովա, Խաղեր*. նաեւ *Լիակատար Ժողովածու*, էջ 17:
- ²⁰ Gaysarian, էջ 28:
- ²¹ Margarian, էջ 246. մանրամասն` էջ 240-250:
- ²² Gaysarian, էջ 28:
- ²³ Այս մօտեցումն ենք տեսնում նաեւ Աբովեանի պարագայում, երբ նա հրաժարուում է գրաբարից եւ գրում է *Վերք Հայաստանին* բարբառով:
- ²⁴ Այս փաստը հիմնաւորում են երոպացի ճանապարհորդներ Տուրնֆորի, Գիւլդենշտեդտի, Կլապրոտի վկայութիւնների հիման վրայ:
- ²⁵ Նիկոլ Աղբալեան, *Ընտրանի*, կազմ. եւ ծանօթ. Գառնիկ Անանեանը, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2005, էջ 28-29:
- ²⁶ Նոյն:
- ²⁷ *Թումանեանը Ժամանակակիցների Յուշերում*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, էջ 11-12:
- ²⁸ E. Bashindjaghian, *30 let, Otdannie Sayat-Nova* (30 տարի նուիրում Սայեաթ-Նովային), Երեւան, ԵՊՀ Հրատ., 19635 էջ 37-38:
- ²⁹ Մօրուս Հասարթեան, «Սայեաթ-Նովա (Կենսագրական Ակնարկ)», *Մայեաթ-Նովա. Հայերէն, Վրացերէն Եւ Աղբրեջաներէն Խաղերի Ժողովածու*, Երեւան, «Հայպետհրատ», 1959, էջ 307: Այդ օրուայ իրադարձութիւնների մասին տե՛ս նաեւ Թումանեան, *Մայեաթ-Նովա. Յօդուածներ*, էջ 81-89:
- ³⁰ Սայեաթ-Նովայի միջազգայնացման փորձ կարելի է համարել նաեւ 1916 Նոյեմբերի 30ին Հայ-Գերմանական Ընկերութեան Երեկոյթը, որտեղ դասախօսում է Թումանեանը: Ներկայ էր գերմանացի դիւանագէտ ֆոն Կոէսը (մանրամասն

- տե՛ս՝ Մուսաննա Յովհաննիսեանի «Մայեթ-Նովան Յովհաննէս Թումանեանի Կէանքում» (*Մայեթ-Նովա – 300 (Զեկուցումների ժողովածու)*), իւր.՝ Ա. Աղասեան, Երևան, ՀՀ ԳԱԱ, «Գիտութիւն» Հրատ., 2012, էջ 157-158):
- ³¹ Մայեթ-Նովայի ստեղծագործութեան երաժշտական առանձնայատկութիւնների ու ասոյթի մասին տե՛ս՝ Նիկողոս Թահմիզեան, *Մայեթ-Նովան Եւ Հայ Գուսանա-Աշուղական Երգ-Երաժշտութիւնը*, Փասսատենա, Դրագարկ Հրատ., 1995. նաեւ՝ *Մայեթ-Նովա – 300*, էջ 7-22, 109-119:
- ³² Margarian, էջ 213:
- ³³ Margarian, էջ 213:
- ³⁴ Այս խնդրի մասին մանրամասն տե՛ս՝ Volker Krischel, *Erläuterungen zu Franz Kafka Die Verwandlung*, 4, Auflage, Hollfeld: C.Bange Verlag, 2005, էջ 14-19:
- ³⁵ Արովեան, էջ 600:
- ³⁶ Արովեան, էջ 600:
- ³⁷ Արովեան, էջ 600:
- ³⁸ Արովեան, էջ 600:
- ³⁹ Արովեան, էջ 600-601:
- ⁴⁰ T. N. Chernova-Dyoke, *Nemetskiye Poseleniya Na Periferii Rossiskoy Imperii, Kavkaz: Vzgljad Skvoz Stoletiya (1818-1917)*, Մոսկուա, ՄՄՆԿ Պրէս, 2008, էջ 17:
- ⁴¹ Այս վիւրտենբերգցիների գաղութացման ծրագրի իրականացման մասին մանրամասն տե՛ս՝ Chernova-Dyoke, էջ 17-35:
- ⁴² Արովեան, էջ 601:
- ⁴³ Արովեան, էջ 601:
- ⁴⁴ Արովեան, էջ 604:
- ⁴⁵ Արովեան, էջ 602:
- ⁴⁶ Արովեան, էջ 601:
- ⁴⁷ Արովեան, էջ 601:
- ⁴⁸ Chernova-Dyoke, էջ 20: Այս խնդրին է անդրադարձնում նաեւ Մարգարեանը իր մենագրութեան «Աւանդական Եւ Եւրոպական Հագուստը» գլխում (Margarian, էջ 211-213):
- ⁴⁹ Արովեան, էջ 603:
- ⁵⁰ Արովեան, էջ 604:
- ⁵¹ Յովհաննէս Թումանեան, *Երկերի ժողովածու 4 Հատորով, Հտր. 4*, Երևան, «Հայաստան» Հրատ., 1969, էջ 173:
- ⁵² Թումանեան, *Հտր. 4*, էջ 185:
- ⁵³ Այս միտքը յստակ երեւում է նաեւ Աղասի Այվազեանի «Թիֆլիսի Յուցանակները» պատմուածքում: Պատումը վարողը նկատում է, որ «Միմպատիա» գետնափոր միկիտանի պատերին Գրիգորը նկարել էր Շեքսպիրին, Րաֆֆուն, Կոպեռնիկոսին, Թամար Թագուհուն, Պուշկինին: Պատումի ընթացքում աւելանում են նկարները: Թամար Թագուհու կողքին նկարում է Արովեանին (Այվազեան, էջ 297, 300): Այս պատկերները վկայում էին Գրիգորի ներաշխարհում տարբեր ազգերի, մասնագիտութիւնների, մշակոյթների անհատների համադրումը: Այս նկարների շարակարգը կարելի է վերագրել նաեւ քաղաքի ոգուն: Այվազեանի բնութագրմամբ՝ «Մի քիչ տուտուց էր Թիֆլիսը, մի քիչ իմաստուն, մի քիչ շռայլ, ասպետ ու դարդիմանդ... օղորմի՛ հոգուն...» (Այվազեան, էջ 297):

-
- ⁵⁴ Աղբալեան, էջ 26:
⁵⁵ Աղբալեան, էջ 26:
⁵⁶ Թումանեան, *Հտր. 4*, էջ 173:
⁵⁷ Թումանեան, *Հտր. 4*, էջ 306:
⁵⁸ Թումանեան, *Հտր. 4*, էջ 174:
⁵⁹ Այս երևույթը տեսանք մեր աչքերով՝ 2013 Յունիսի սկզբներին: Ոչ-այնքան հեռու Մայդանից, երեք հոգի դուրսը նստած քեֆ էին անում, որոնց քեֆը զարդարում էին չորս երաժիշտ, իսկ անցորդները պարում էին կարճ ու հեռանում:
⁶⁰ Margarian, էջ 190:
⁶¹ Աղբալեան, էջ 26:
⁶² Աղբալեան, էջ 27:
⁶³ Աղբալեան, էջ 27:
⁶⁴ Մայեաթ-Նովան Աղբալեանի հայեացքով խնդրի մասին տե՛ս՝ Սամուէլ Սուրադեան, *Գրական Հանգրուաններ, Գիրք Բ*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2007, էջ 37-58:
⁶⁵ Աղբալեան, էջ 28:
⁶⁶ Թումանեան, *Հտր. 4*, էջ. :174:
⁶⁷ Թումանեան, *Հտր. 4*, էջ 174:
⁶⁸ Թումանեան, *Հտր. 4*, էջ 174:
⁶⁹ Նեղուբին, գրկանք:
⁷⁰ Թումանեան, *Հտր. 4*, էջ 174:
⁷¹ Թումանեան, *Հտր. 4*, էջ 210:

OLD TBILISI AS A MILIEU OF CULTURAL INTEGRATIVE DIALOGUE
(SUMMARY)

TIGRAN SIMYAN
tsimyan@googlemail.com

The author describes the multicultural milieu of 18th-19th century Tbilisi based on a number of Armenian literary figures' observations. He refers to the poems of the multilingual troubadour-poet Sayat Nova (1722-1795) and the essay of one of the founders of modern Armenian literature, Khachadour Apovian (1809-1848), called "A View on the Life of the Tbilisi Armenians, Particularly their Wedding Traditions" as well as the articles of the renowned poet Hovhannes Toumanian (1869-1923) and the literary critique Nigol Aghpalian (1873-1947).

The author notes that the examination of these texts enables the reconstruction of Tbilisi's lifestyle, which was somewhere between Eastern and Western.

He argues that multilingual and multicultural cities and spaces are fertile grounds for cultural dialogue, which leads to a cultural explosion and produces change and growth in the quality and values of local arts and literature. The author highlights the carnival atmosphere of the city, where Georgian wine and the confusing mixture of Eastern and Western market outputs and values criss-crossed and enriched the cultures of the diverse ethnic residents of the city.